

ամբաստանութիւնք եւ կամ յանդիմանութիւնք՝ պատահական զեղծումներէ շատ տարբեր բանի մը հաւաստիքն են մեզ :

Յ. — Քաղաքական անկումն : — Գլխաւորապէս ազատանւոյն, ազգին այդ կարեւորագոյն ու վարիչ մասին կենաց յիշեալ աւերը՝ սահմանուած էր լինել նախադուռն քաղաքային կենաց վատթարացման : Ուսկից էր մեր մէջ պակասն աշխարհակալ թագաւորաց կամ զօրավարաց, ի բաց առեալ Տիգրան մը՝ որուն չափով մը ժպտեցաւ բախտը կարճ ժամանակի համար միայն : Ուսկից էր մեր երկրին տկարութիւնը, հակառակ այնչափ պերճաշուք նախարարութեանց համախումբ զօրութեան : Եւ վերջապէս ո՞ւր գնացին այդ նախարարութիւնք :

Հիմայ աւելի դիւրաւ կրնանք տալ այս հարցմանց պատասխանը, համառօտ եւ ամփոփ : Քաղաքական յաջողութեանց դեկը՝ զինուորական առաքինութիւնն է, իսկ այս առաքինութիւնն անհաշտ էր հայ աւագանւոյն — մեր այդ բարձր զօրականին — անժուժկալ կենցաղավարութեան հետ : Պատերազմը հոմանիշ է խստամբեր զրկանաց կամ անձնուրացութեան, իսկ հայ ազնուականը, սնած իւր տաճարին հեշտաբոյր մթնոլորտով, ծաղկով ու խնկով եւ